



Համարը N 64-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ
2016.07.15/15(558)
Հոդ.209

Ընդունող մարմինը Աշխատանքի և
սոցիալական
հարցերի
նախարար

Ստորագրող մարմինը Աշխատանքի և
սոցիալական
հարցերի
նախարար

Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.07.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 14.06.2016

Ստորագրման ամսաթիվը 14.06.2016

Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- + Կապեր այլ փաստաթղթերի հետ
- + Փոփոխումներ և հնկորպորացիաներ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 25-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
29 հունիսի 2016 թ.
Պետական գրանցման թիվ 11516213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

14 հունիսի 2016 թ.

N 64-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 25-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման հավելված N 1-ի 12-րդ կետի «ա» ենթակետի՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի «Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը, տարածքային մակարդակում սոցիալական համաձայնագրի ընդունման ընթացակարգը, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի օրինակելի աշխատակարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2000 թվականի հուլիսի 31-ի N 36-Պ և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 18-ի N 153-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- 1) հրամանի N 1 հավելվածի 3.2-րդ՝
 - ա. կետը «ընդգրկվում են» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության _____ մարզպետարանի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի _____ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի,» բառերով,
 - բ. կետում «հինգ անդամ» բառերը փոխարինել «վեց, ընդամենը տասնմեկ անդամ» բառերով.
 - 2) հրամանի N 1 հավելվածի 3.6-րդ կետը՝ «վերջնաժամկետը» բառից հետո լրացնել «՝ մեկ ամիս» բառերով.
 - 3) հրամանի N 1 հավելվածի 3.8-րդ կետը՝ «քաղաքապետին» բառից հետո լրացնել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
 - 4) հրամանի N 1 հավելվածի 3.9-րդ կետում «հինգից» բառը փոխարինել «վեցից» բառով:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. Ասատրյան